Մկրտիչ Կորյուն



# Ծաղիկն ու մեղուն

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ—1937

891.99Ա
Կ-78

891.9915
Կ-78
2011-07
4084
1010
42220

Արևի տակ, կանաչ դաշտում
Մեղուն տեսավ մի ծաղիկ,
Մոտիկ վազեց, վոր են նախշուն,
Ծաղկի հյութերը քաղի։

Մեղու — Բարե՜վ, բարե՜վ կապույտ
ծաղիկ,
Ա՜խ, ինչ լավն ես ու դալար,
Թող քո սրտից մեղուն քաղի
Անուշ հյութեր իր համար։

Ծաղիկ — Պստի՜կ մեղու,
Ճստի՜կ մեղու,
Աշխատասեր ու արի,

Гос. Библиотека ССРА им. А. Мясникяна

24 MAY 2013
10192

Ո՞ւր ես տանում
Ի՞նչ ես անում
Փոշին դու իմ թեւերի.

Մեղու — Կապույտ ծաղիկ նուրբ ու նախշուն,
Բացված գարնան հովի հետ,
Ես քո հյութից մեղր եմ քաշում
Համով-հոտով բուրավետ։
Առավոտից մինչ ուշ գիշեր
Շրջում եմ դաշտ ու այգի,
— Չէ՞ որ յես էլ անդամն եմ ժիր
Մեր յերջանիկ համայնքի։

Ի՞նչ է մեղուն համայնքից դուրս՝
Թույլ ու չնչին և անզոր
Իսկ իր հսկա համայնքի մեջ
Եվ ուժեղ է և հզոր։
Մենք միասին հաշտ յեվ ուրախ
Աշխատում ենք ու դատում,
Աշխատանքը՝ աշխույժ մի խաղ,
Կյանքը՝ վայելք ու խնդում։
Ով չաշխատեց մեղվանոցում
Չի ունենա կյանք ու հաց,
Հոտով-հյութով սիրտդ լեցուն,
Կապույտ ծաղիկ, իմ դեմ բաց։

Ծաղիկ - Յես արեվի ջինջ շողերով
Ջերմ շողերով եմ բացվել,
Արշալույսի հստակ ցողով
Պայծառ շաղով լվացվել։
Արև, արև սիրուն մեղու,
Յեվ ժրաջան յեվ կայտառ
Բաց եմ արել սիրտս քո դեմ,
Արի քաղիր հյութը տար,
Վոր դու յերբեք չծուլանաս
Լինես յեվ ժիր յեվ արի,
Յեվ աշխարհին բարիքներ տաս
Համով-հոտով բուրալի։

Публ. Библиотека
ССРА
им. А. Мясникяна

Պատ. խմբագիր՝ Արաքս
Տեխ. խմբագիր Ս. Գասպարյան
Սրբագրիչ Ա. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր Կ—4548, Հրատ. 4029
Պատվեր 487, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Յերեվան, II Կնունյանցի, 4

ՀՀ Ազգային գրադարան
NL0402204

10192

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

М. КОРЮН

**Цветок и пчела**

Сектор детскойюношской литературы Армгиза
при ЦК ЛКСМ Арм., Ереван, 19377 г.